

# ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

## ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

### ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը  
դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան  
բարձրացնելու միջոց

Ուսուցիչ՝

Ա. Հովհաննիսյան

Ղեկավար՝

Ա. Խալաթյան

Եղեգնաձոր 2023

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....	5
ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ .....	8
ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴՐԱԿԱՆ և ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ.....	11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....	15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	16
Գրականության ցանկ .....	17

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից դպրոցի կարևորագույն խնդիրն է սովորեցնել մարդուն ապրել տեղեկատվական աշխարհում:

Պ. Սեմյոնով (ակադեմիկոս)

Մեզ շրջապատող աշխարհում ամենուրեք հանդիպում ենք գիտական և տեխնիկական նվաճումների բազմաթիվ վկայությունների: Գիտությունը դարձել է և հետագայում էլ կմնա մարդկային հասարակության զարգացումն ապահովող իրական ուժ: Կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ:

Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պատիվ ունեն դրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողութային յուններ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր:

**Թեմայի արդիականությունը.** Նորագույն տեխնոլոգիաները մարդկային կյանքի, ողջ հասարակության համար ստեղծել են նոր աշխարհ: Ներկա դարաշրջանում մարդ արարածը մուտք է գործել տեխնոլոգիաների նոր դարաշրջան, որն արագ տեմպերով փոփոխության է ենթարկել նրա հասարակական կյանքը: Վաղուց այլևս գաղտնիք չէ, որ անհնար է պատկերացնել մեր առօրյան, աշխատանքային գործունեությունը և սովորական մարդկային շփումը առանց տեղեկատվական տեխնոլոգիաների: Ավելին,

վաղուց ժամանակն է այդ տեխնոլոգիաների արդյունավետ և նպատակային մուտքը ուսումնական գործընթացում:

Գաղտնիք չէ, որ մեր օրերում աշակերտներին ավելի շատ գրավում է համակարգիչը, համացանցը և առանց դրանց նրանք չեն կարողանում պատկերացնել իրենց առօրյան: Հետևապես ուսումնական պրոցեսում աշակերտին տեղեկատվության փոխանցումը որքան մոտ լինի նրա նախասիրություններին, այնքան ավելի արդյունավետ կլինի ուսումնական գործընթացը:

### **Հետազոտության նպատակն է .**

1. Համոզվել, որ իսկապես Տեղեկատվական Տեխնոլոգիան անհրաժեշտ է ոչ միայն առօրյա կյանքում, աշխատավայրերում, այլ նաև ուսումնական գործընթացում:
2. Համոզվել , որ Տեղեկատվական Տեխնոլոգիաների օգտագործումը տարրական դպրոցում կարող է դասը դարձնել ավելի հետաքրքիր և պատկերավոր:

## **ԳԼՈՒԽ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ**

Ժամանակակից աշխարհում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները գնալով ավելի կարևոր տեղ են գրավում: Այս առումով դպրոցական գործընթացը կյանքից հետ չպետք է մնա: Այդ պատճառով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումը ժամանակակից դասի կառուցվածքում շատ արդիական է: ՏՀՏ-ների արագ զարգացումը ներկա ժամանակաշրջանում նոր պահանջներ է դրել կրթական համակարգի առաջ ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Դրանք դարձել են ժամանակի որակյալ և արդիական կրթության հրամայական:

ՏՀՏ-ի ներդրումը ուսումնական գործընթացում ստեղծում է նոր մանկավարժական գործիքներ և դրանով ուսուցչին տալիս է նոր հնարավորություններ: Ընդ որում փոխվում են ոչ միայն ուսուցչի գործառույթները, այլ նաև զգալիորեն ընդլայնվում է աշակերտի ինքնուրույն աշխատանքի ոլորտը:

Ժամանակակից կրթական համակարգում դրանք շատ գործունակ միջոց են համարվում, քանի որ խթանում են սովորողի ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութը, հասնել դպրոցական առարկաների ավելի խորը ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրությունը առարկաների նկատմամբ: ՏՀՏ –ների օգտագործումը հնարավորություն է տալիս նաև կիրառել ժամանակակից ուսուցման և գնահատման մեթոդներ:

Նորարարական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով հնարավոր է.

- ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը՝ համակցելով ուսուցման ավանդական և ինտերակտիվ մեթոդների հետ,

- սովորողների կողմից ուսուցանվող նյութի յուրացման դյուրինացումը և նրանց առաջադիմության ու մոտիվացիայի բարձրացումը,
- բոլոր սովորողների համար որակյալ և արդիական կրթություն ստանալու հավասար պայմանների ապահովումը՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ազգային փոքրամասնություններին պատկանող, գյուղական, սահմանամերձ ու մեկուսացված բնակավայրերի և այլ խոցելի խմբերի երեխաների համար,
- դպրոցական տարիքից սովորողներին ժամանակակից SCS-ին հաղորդակից դարձնելը, դրանցով աշխատել սովորեցնելը և տեղեկատվության լայն հասանելիությունն ապահովելը,
- հայալեզու էլեկտրոնային տարատեսակ ռեսուրսների ստեղծումը և օգտագործումը ուսումնական գործընթացում,

Ուսումնական գործընթացում SCS գործիքների կիրառումը նոր մակարդակի կբարձրացնի ուսումնառության որակը՝ ապահովելով բոլոր սովորողների համար տարատեսակ էլեկտրոնային ռեսուրսների, համակարգչային սարքերի և համացանցային կապի հավասար մատչելիությունը:

SCS-ները ուսումնական գործընթացում մեծ հնարավորություն են ընձեռնում մուտք գործել այնպիսի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի է գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր, ընդլայնել ուսումնական ծրագրերի և դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները: Եվ ի վերջո SCS-ները թույլ են տալիս դասավանդողին և սովորողին հաղորդակցվել միևնույն միջավայրում և միևնույն «լեզվով»: Դրանք ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու

ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ:<sup>1</sup>

Մյուս կողմից աշակերտը դառնալով դասի ակտիվ մասնակիցը, օգտագործելով նորագույն տեխնոլոգիաները կարող է ստեղծել դինամիկ և հարուստ ուսումնական նյութ, որի միջոցով ուսուցումն ավելի տպավորիչ է դառնում: Եվ աշակերտի մոտ զարգանում է պատասխանատվության մեծ զգացում, քանի որ նա գիտակցում է, որ դասարանում կամ իր շրջապատում կա ինչ-որ բան, որ կախված է իրենից:

ՏՀՏ-ների կիրառմամբ ուսուցիչն արագ կողմնորոշվում է, թե աշակերտները որտեղ են դժվարացել հարցերին պատասխանելիս են, և ըստ այդմ՝ կազմակերպում է դասի հետագա ընթացքը: Նպատակահարմար են նաև ժամանակի խնայողության առումով, քանի որ ուսուցիչն անմիջապես կարողանում է տեսնել ամբողջ դասարանի գրավոր աշխատանքի արդյունքները. այլևս անհրաժեշտ չէ մի քանի ժամ վատնել գրավորների ստուգման վրա: Ուսուցիչը յուրաքանչյուր առաջադրանքից հետո կարող է վերլուծել սովորողների կողմից թեմայի յուրացման պատկերը: Բացառվում է արտագրելու հնարավորությունը, և ուսուցիչն անհատական մոտեցում է ցուցաբերում աշակերտներից յուրաքանչյուրին: Ապահովվում են ուսուցչի մասնագիտական զարգացումն ու կատարելագործումը:

ՏՀՏ-ների կիրառմամբ աշակերտը ձեռք է բերում թե՛ տեխնոլոգիական, թե՛ առարկայական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ունի նոր նյութը ամրապնդելու հնարավորություն՝ կատարելով անսահմանափակ թվով առաջադրանքներ: ՏՀՏ-ների կիրառումը խթանում է աշակերտի՝ սովորել սովորելու կարողությունը. նա կարող է տեսական նյութը սովորել ինքնուրույն, հայթայթել իրեն հետաքրքրող և անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն: Աշակերտին տրվում է ժամանակը կառավարելու ճկունություն. նա կարող է առաջադրանքները կատարել իրեն հարմար

---

<sup>1</sup> <https://lib.amedu.am/files/resource/files/2022-06-27/a02dd7f29ca161f255042619e3469101.pdf>

ցանկացած ժամի և ցանկացած վայրում՝ առանց որևէ սահմանափակման: ՏՀՏ-ների կիրառումը նպաստում է սովորողների ճանաչողական, վերլուծական, քննադատական մտածողության զարգացմանը, հարստացնում ուսուցման մեթոդները, միջոցները և հնարները:

Հանրակրթական դպրոցում ուսուցման պրոցեսում ՏՀՏ-ի օգտագործման նպատակներն են՝

- Դասը դարձնել ժամանակակից ( տեխնիկական միջոցների կիրառման առումով)
- Դասը մոտեցնել ժամանակակից երեխայի աշխարհայացքին
- Նոր նյութի ներկայացումը դարձնել առավել հետաքրքիր՝ ապահովելով մատուցվող նյութի մատչելիություն:
  - Գիտելիքների ստուգումը իրականացնել առավել արդյունավետ և օբյեկտիվ:
- Բարձրացնել աշակերտների հետաքրքրությունը ուսումնառության պրոցեսի նկատմամբ և ապահովել աշակերտների ներգրավվածությունը ուսումնական գործընթացում:
- Ձևավորել տեղեկատվության հետ աշխատելու ունակություն և իրավազեկություն դեռևս կրտսեր դպրոցից:
- Ապահովել սովորողի և ուսուցչի միջև ուսումնական գործընթացում համագործակցություն: <sup>2</sup>

## **ԳԼՈՒԽ 2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները մեր օրերի մարդուն ստիպում են անընդհատ յուրացնել նոր գիտելիքներ, տիրապետել նորանոր կարողությունների և



հմտությունների, պատրաստ լինել ցկյանս կրթության: Այդ նշանակում է, որ կրթական համակարգում ժամանակի պահանջով էական փոփոխություններ պետք է կատարվեն: Իրական բարեփոխումներ պետք է կատարվեն հատկապես հանրակրթության ոլորտում՝ որպես մասնագիտական կրթության հիմքի: Այդ բարեփոխումները պետք է վերաբերվեն և՛ կրթական բարենպաստ միջավայրի ստեղծմանը, և՛ ուսուցման նոր մեթոդների, տեխնոլոգիաների, միջոցների ու ձևերի ներդրմանը: Այսօր հասարակության լիարժեք անդամ ձևավորելու համար անհրաժեշտ է ժամանակակից պահանջներին համապատասխանող կրթական համակարգ, որի պարտադիր պայմանը սովորողների կողմից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին լիարժեք տիրապետումն է դպրոցի բոլոր աստիճաններում՝ սկսած տարրականից: Այսօր կրտսեր դպրոցականը կարողանում է օգտվել տեղեկատվական–հաղորդակցական տեխնոլոգիաներից, ուստի դրանից օգտվելու կարողությունների զարգացումն ու կիրառումը տարրական դասարաններում անհրաժեշտություն է: ՏՀՏ-ների կիրառումը տարրական դասարաններում օգնում է սովորողներին կողմնորոշվել շրջապատող իրականության մեջ, տիրապետել տեղեկատվական դաշտում աշխատելու գործնական միջոցներին, էլ ավելի զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողություններն ու հմտությունները: Բնականաբար, տեղեկատվական միջոցների ճիշտ ընտրությունը և օգտագործումը տարրական դասարաններում մանկավարժական կարևորագույն խնդիր է: Այն պետք է սկսել առաջին դասարանից:<sup>3</sup>

21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է: Ժամանակակից երեխան ապրում է էլեկտրոնային մշակույթի դարում: Նրանց հետաքրքրություններն այսօր փոխվել են և այժմ երեխաներին հետաքրքրում են համակարգչային խաղերն ու շփումները սոցիալական կայքերում: Եվ մեր խնդիրն է օգնել երեխային ճիշտ ու նպատակային օգտագործել այն ամենը, ինչ մեզ են թելադրում արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:

---

<sup>3</sup> <https://old.vsu.am/>

Տարրական դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի: Առաջանում են մի շարք խնդիրներ. որտեղ գտնել և ինչպես ներկայացնել նյութը:

Այստեղ օգնության է գալիս համակարգիչը՝ համացանցը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝ լինի մեդիագրագետ:

Տարրական դպրոցի երեխային տրված արդյունքներից մեկը պիտի լինի նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի իմացությունն ու հմտությունը, կիրառելու այն ինքնակրթության համար: ՏՀՏ կիրառումը տարրական դպրոցում, աշակերտին հնարավորություն է տալիս հմտացնել կողմնորոշվելու, փոխանակելու և տիրապետելու կարողությունը տեղեկատվական աշխարհում: ՏՀՏ-ի կիրառումը տարրական դպրոցում հանգեցնում է բացատրողական-նկարագարդ մատուցման փոխարինմանը՝ կիրառականով: Աշակերտը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: Նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի էմոցիոնալ, մատչելի և գրավիչ է դարձնում նյութը, իսկ աշակերտին տալիս է կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն:<sup>4</sup>

Այսօր տարրական դպրոցում կրստեր դպրոցականների կողմից ՏՀՏ-ների կիրառումը իրականացվում է հետևյալ նպատակներով.

- հեռավար կրթություն իրականացնելու,
- տեղեկատվության ստացման և մշակման,
- տվյալների համակարգման,
- գործընթացի կամ երևույթի մոդելավորման,

<sup>4</sup> <https://krtsernordproc.wordpress.com>

- բազմաբնույթ տեղեկատվության փոխանակման, տվյալների շտեմարաններից օգտվելու,
- ուսուցման համակարգչային ծրագրերի և ուսուցման տեսալսողական միջոցների օգտագործման,
- ուսումնական գործընթացին անհրաժեշտ դիդակտիկական նյութերի ստեղծման և օգտագործման,
- տեղեկատվության որոնման և հաղորդակցման:

Ուսուցիչը, դասին նախապատրաստվելիս պետք է հանգամանորեն մտածի S<S-ի օգտագործման նպատակի, տեղի և ձևի մասին: S<S-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի.

- Դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում /առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/, Ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի /շնորհանդես/ ստեղծում:
- Պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում՝ դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում:

### **ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԴՐԱԿԱՆ և ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ**

S<S-ների օգտագործման հնարավորությունների շառավիղը բավականին լայն է: Իհարկե, աշխատելով կրտսեր դպրոցականների հետ, անհրաժեշտ է հիշել պատվիրանը՝ «Մի վնասիր»: Այդ պատճառով Տեղեկատվական Տեխնոլոգիաների օգտագուծումը ունի և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն:

Դրական	Բացասական
Երեխան աշխարհը ճանաչում է համակարգչի միջոցով. խաղեր, մուլտֆիլմեր, նկարներ և այլն:	Պարբերաբար համակարգչից օգտվելը երեխայի մոտ կարող է առաջացնել կեցվածքի փոփոխություն՝ ողնաշարի շեղումներ, կուզ:
Համացանցը և համակարգիչը օգտակար և անհրաժեշտ ինֆորմացիայի աղբյուր են:	Երեխաների անվերահսկելի այցելությունները կասկածելի համացանցային կայքեր, ծանոթությունն ու փոխշփումներն այնպիսի մարդկանց հետ, որոնք դաստիարակության առումով ունեն անցանկալի հայացքներ, տեսակետներ ու հակումներ կարող է բերել անցանկալի հետևանքների:
Տարբեր կենդանիների, հեքիաթային հերոսների պատկերներն ու նկարները, երեխաներին հուզող բազմաթիվ հարցերի, ինչո՞ւն է պատասխանները կարող են գտնվել համացանցում:	Հեռուստատեսությանն նայելուց լարվում են աչքերը, իսկ եթե դա երկար է տևում աչքերի ծանրաբեռնվածությունը դառնում է չափից ավելին, որը կարող է առաջացնել տեսողական խնդիրներ:
Երեխաների ուշադրությունը, մտածողությունը, տրամաբանությունը կարելի է զարգացնել ճիշտ ընտրված խաղերի ու առաջադրանքների շնորհիվ:	Չի վերահսկվում ինֆորմացիանչկան տարիքային սահմանափակումներն և արգելքներ: Համացանցը լի է անորակ, չճշգրտված ինֆորմացիաներով, երևտիկ բնույթի նկարներով և տեսանյութերով, որոնք կարող են կլանել անգամ հասուն և գիտակցմեծահասակներին:
Համակարգիչը և բջջային հեռախոսը հնարավորություն են	Համակարգչային դերային խաղերը յուրաքանչյուր երեխայի համար

<p>տալիս հաղթահարել մեկուսացումը և ձեռք բերել ընկերներ, կիսվել սեփական փորձով և ստանալ օգնություն կամ խորհուրդ նմանատիպ խնդիրների հետ քախվող որևէ անձից:</p>	<p>հոգեբանական կախվածության մեծ վտանգ ներկայացնում: Ցանկացած տիպի դերային խաղից երեխային դժվար է կտրվելը, իրական աշխարհը վերջինիս հետ համեմատած անգույն է ու անհետաքրքիր:</p>
--	---

Այստեղ նշված կետերի՝ ուսումնական գործընթացում S<S-ի կիրառման անհրաժեշտության և դրա կիրառման դեպքում առկա ռիսկերն ու խնդիրները շրջանցելու համար շատ կարևոր որպեսզի ուսուցիչը ունենա մասնագիտական հմտություններ, ինքնակրթությամբ զբաղվելու միտում և նպատակաուղղված քայլեր:

S<S-ների կիրառումը տարրական դպրոցի դասագործընթացում ուսուցչից պահանջում է դասին նախապատրաստական մեծ ջանքեր և ժամանակ, քանի որ ամենօրյա դասը պլանավորելիս անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի սցենարը, նախագծել գործողությունների հերթագայումը, դասի կահավորման տեխնիկական միջոցների տեսակներն ու դրանց կիրառման նպատակահարմարությունը դասագործընթացի որոշակի փուլերում: Այս ամենի արդյունավետ իրականացման համար կարևորվում է ուսուցչի մեդիակոմպետենտությունն ու մեդիագրագիտությունը, դասավանդվող նյութի լիարժեք իմացությունը:

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

**Դասի պլան**

**Առարկան՝** Մայրենի /3-րդ դասարան/

**Դասի թեման՝** Սողոմոն Մկրտչյան <<Թագավորն ու հողագործը>>

**Դասի տիպը՝** Նոր դասի 2 դասաժամ

**Դասի նպատակները՝**

ա/ ուսուցանող

- Կարողանան վարժ կարգալ, հասկանալով և առոգանությամբ կարգալ, դատողություններ անել, անսխալ գրել
- Վերլուծեն և բնութագրեն հերոսների արարքներն ու վերաբերմունքը
- Խորացնեն արմատ, ածանց հասկացությունների մասին ունեցած գիտելիքները
- Մեկնաբանեն նորածանոթ բառերի իմաստը՝ օգտվելով բառարաններից
- Զարգացնեն լեզվական կարողունակությունը

բ/ զարգացնող

- Կկարողանան ընթերցածի շուրջ դատողություններ անել
- Ասացվածքների և դարձվածքների միջոցով կկատարեն եզրահանգումներ
- Կդիտարկեն ծառը որպես բարիքի աղբյուր

գ/ դաստիարակող

- Կփորձեն հասկանալ և գնահատել խոսքի արժեքը
- Կհասկանան բարի գործ կատարելու անհրաժեշտությունը
- Կդրսևորեն հոգատար վերաբերմունք մարդու և բնության նկատմամբ:

Դասի ընթացքը

Խթանում

Աշակերտը բարձրաձայն ընթերցում է նախապատրաստական ուղերձը և փորձում է կարծիք հայտնել

**Իմաստի ընկալում**

Տեքստը կարդում է հատվածներով: Յուրաքանչյուր հատվածի ընթերցանությունից հետո աշակերտին տրվում է հարցեր ինչպես ընթերցածի շուրջ դատողություններ կատարելու, այնպես էլ հաջորդ հատվածի դեպքերի հաջորդականությունը կռահելու նպատակով:

Աշակերտին տրվում է ժամանակ եզրահանգումներ կատարելու, մտքեր արտահայտելու և կանխագուշակումներ կատարելու համար:

Վերջում տրվում են ամփոփիչ հարցեր բնագրի ամբողջական ընկալման մակարդակը բացահայտելու նպատակով:

## Լեզվատրամաբանական առաջադրանքներ

1. Նկարագրել բնագրի գլխավոր հերոսներին՝ տրված բառաշարքերից ընտրելով համապատասխան բառերը:
2. Մեկնաբանել դարձվածքները
4. Կազմել բարդ բառեր

## Կշռադատում

<https://learningapps.org/watch?v=p7bjgx1i523> խաղի միջոցով ամրապնդել բարդ և ածանցավոր բառերը

## Տնային հանձնարարություն

Սովորել վարժ կարդալ, պատմել:

**Դասի վերլուծություն.** Դասարանում կա ընդամենը մեկ աշակերտ, դասը անցավ բնականոն ձևով, աշակերտը ակտիվ մասնակցեց դասի բոլոր փուլերին, հատկապես երբ կշռադատման փուլում սկսեց խաղալ բարդ թե՛ ածանցավոր խաղը, որը կազմվել էր իմ կողմից <https://learningapps.org> գործիքի միջոցով ավելի ակտիվ էր և աշխույժ, քանի որ խաղային տեխնոլոգիան ավելի հարազատ էր իրեն: Խաղի մեջ հիմնականում ընդգրկված էին դասից բառեր, որոնք իրեն ծանոթ էին:

## ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով , դասարանը , որտեղ ես դաս եմ պարապում , աշակերտների թվաքանակը շատ քիչ է, ուստի դասի ընթացքը ավելի հետաքրքիր դարձնելու համար ՏՏՏ –ների օգտագործումը բավականին արդյունավետ է լինում:

ՏՏՏ-ն օգտագործելու համար ուսուցիչը պետք է ունենա հստակ նպատակ և իհարկե ՏՏՏ-ներից օգտվելու հմտություն: Կրտսեր դպրոցում դասի ներկայացումը

սահիկաշարի կամ խաղերի միջոցով աշակերտները ավելի արագ են ընկալում և ավելի տպավորիչ է դառնում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. <https://lib.armedu.am/files/resource>
2. <https://big-movies.ru>
3. <https://old.vsu.am/>
4. <https://krtsernordproc.wordpress.com>



